հայք, Վասպուրական, Արցախ, Սիւնիք, Փայտակարան, Գուգարք, Տայք և Այրարատ ։»

Դարձեալ ըստ Հիւբշմանի (*Հանդէս Ամսօրեայ՝ երես* 187. 1905 *Յունիս*)․ «*Փաւստոսի* (159) *բաժնին նայելով, Դ. դարուն Հայաստանի կը վերաբերէին քաղաքականապէս քանի մը սահմանակից երկիրներ, զորոնք Աղձնեաց և Կորդուաց հարաւակողմը փնտռելու ենք ։ Հայաստանի բաժանումէն առաջ, կամ բաժանմանն ատեն Պարսից անցան անոնք․ և Հայք վերջէն ալ երբէք Հայաստանի մաս համարած չեն զանոնք ։»*

(Երես 252. Բազմավէպ) «*Շատ պատմագիրներ Տմորիք և Կորդրիք կը միացնեն ։ Ասոր․* Tmoräyë, «*Վայրենի լեռնական ժողովուրդ մը Պարսից պետութեան մէջ, որուն հետ Կաւատ* 506*ի խաղաղութենէն ետքը ստիպուեցաւ պատերազմիլ ։*

(Noldecke ZdMG. 33, 158, *են.*)

«*Կորդուք գաւառին գիրքը բաւականաչափ որոշուած է* Betmanin (*տես էջ* 250) *անուն տեղւոյն միջնորդութեամբ, արեւմտեան կողմանէ Տիգրիսի կը կցէր, Տմորիքի գիրքն որոշուած է* Էլկի — Էլկով, *Որսկրանքին Մեծ Զարով, Փոքր Աղբակին* Զուլամերկով ։»

Այս զանազան հատուկտոր քաղուածները ի մի բերելով ու իրարու քով շարելով նպատակ ունեցանք լիովին գաղափար մը կազմել տալու Քիւրդերու Հայրենիքի, Հայաստանի և Հայոց հետ ունեցած առնչութեան մասին․ ինչպէս կը տեսնուի, եթէ հին դարերու մէջ հին Հայերը արենական (*) *բացորոշ հաղորդակցութիւն չեն ունեցած, բայց բացայայտ է որ բնակակցական մէկ ամբողջութեան շարք մը ունին հին Քիւրդերու հետ ։*

(*) *Ըստ Խորենացւոյ Տիգրան Ա. իր քոյր Տիգրանուհին Մարաց Աժդահակին կնութեան էր տուած ։*